

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Կոդ TRM26-0001-19 PUB	Խմբագրություն 01
Կազմեց	Հաստատված
Բիզնես գործընթացների կառավարման բաժին	Վարչության 24/08/2026թ. թիվ 27 արձանագրությամբ
	Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան_____
Կիրառման ոլորտ	Խնայողական հաշիվների բացման, վարման, սպասարկման և փակման գործընթացներում ներգրավված Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ:
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Սպառողական պրոդուկտների զարգացման բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01/10/2026թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

Հաճախորդների խումբ	Բանկի՝ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներ, որոնք Բանկում ունեն առնվազն մեկ այլ գործող բանկային հաշիվ:
Բացման արժույթ ¹	ՀՀ դրամ
	ԱՄՆ դոլար
	Եվրո

¹ Նույն արժույթով կարող է բացվել առավելագույնը 4 հաշիվ

Հաշվի դրական մնացորդի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները²

	Հաշվի՝ տոկոսների հաշվարկման ենթակա մնացորդ	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000 ՀՀ դրամ ներառյալ	3%	3.03%
	1,000,000 ՀՀ դրամը գերազանցող՝ մինչև 3,000,000 ՀՀ դրամ ներառյալ	4%	4.06%
	3,000,000 ՀՀ դրամը գերազանցող՝ մինչև 15,000,000 ՀՀ դրամ ներառյալ	5%	5.09%
	15,000,000 ՀՀ դրամը գերազանցող՝		
ԱՄՆ դոլար	100 ԱՄՆ դոլարից մինչև 3,000 ԱՄՆ դոլար ներառյալ	0.5%	0.50%
	3,000 ԱՄՆ դոլարը գերազանցող՝ մինչև 10,000 ԱՄՆ դոլար ներառյալ	0.75%	0.75%
	10,000 ԱՄՆ դոլարը գերազանցող՝ մինչև 40,000 ԱՄՆ դոլար ներառյալ	1%	1.00%
Եվրո	100 եվրոյից մինչև 40,000 եվրո ներառյալ	0.2%	0.20%
Տոկոսների հաշվարկման ձևը	- Տվյալ օրվա համար կիրառվող տարեկան անվանական տոկոսադրույքը որոշվում է խնայողական հաշվի՝ օրվա վերջի մնացորդի չափով՝ համաձայն սահմանված տոկոսադրույքային միջակայքների: - Տվյալ մնացորդի չափով որոշված տոկոսադրույքը կիրառվում է հաշվի ամբողջ՝ տոկոսների հաշվարկման ենթակա գումարի նկատմամբ, այլ ոչ թե մնացորդի առանձին մասերի նկատմամբ՝ տարբեր տոկոսադրույքներով: - Եթե հաշվի մնացորդը գերազանցում է տվյալ արժույթի համար տոկոսների հաշվարկման համար սահմանված առավելագույն սահմանաչափը, ապա այդ սահմանաչափի շրջանակում գտնվող գումարի նկատմամբ կիրառվում է տվյալ արժույթի համար սահմանված առավելագույն տարեկան անվանական տոկոսադրույքը, իսկ սահմանաչափը գերազանցող մասի նկատմամբ՝ 0% տարեկան անվանական տոկոսադրույք: - Եթե տվյալ օրվա վերջի դրությամբ խնայողական հաշվի մնացորդը փոքր է համապատասխանաբար 50,000 ՀՀ դրամից, 100 ԱՄՆ դոլարից կամ 100 եվրոյից, տվյալ օրվա համար հաշվի մնացորդի նկատմամբ կիրառվում է 0% տարեկան անվանական տոկոսադրույք: - Նույն արժույթով մեկից ավելի խնայողական հաշիվ ունենալու դեպքում յուրաքանչյուր խնայողական հաշվի համար կիրառվող տարեկան անվանական տոկոսադրույքը որոշվում է առանձին՝ տվյալ հաշվի օրվա վերջի մնացորդի չափով՝ առանց նույն արժույթով այլ խնայողական հաշիվների մնացորդները գումարելու: - Տոկոսների հաշվարկն իրականացվում է օրական կտրվածքով՝ յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկելով տարեկան անվանական տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նախանշ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ: - Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել սույն պայմաններով սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքները՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ հաճախորդի հետ համաձայնեցված հաղորդակցման եղանակով տեղեկացնելով հաճախորդին:		
Տոկոսների վճարումը	- Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 1-ին օրը՝ հաշվի արժույթով, անկախ նախորդող եռամսյակում տվյալ խնայողական հաշիվը փակելու հանգամանքից: - Տոկոսագումարները վճարվում են անկանխիկ եղանակով՝ հաշվեգրվելով համապատասխան խնայողական հաշվին: - Եթե խնայողական հաշիվը չի փակվել մինչև համապատասխան եռամսյակի ավարտը, տվյալ եռամսյակի ընթացքում այն օրերի համար հաշվարկված տոկոսագումարները, որոնց ընթացքում հաշվի մնացորդը համապատասխանել է տոկոսների հաշվարկման համար սահմանված պահանջներին, ենթակա են վճարման՝ անկախ այդ օրերի քանակից:		
Հաշվի բացման միանվագ վճար³			Անվճար
Խնայողական հաշվից փոխանցումներ Էվոկաբանկ ԲԲԸ-ում իր այլ հաշիվներին			Անվճար
Հաշվի բացման/համալրման նվազագույն գումար			Չի սահմանվում
Հաշվով գործարքների նվազագույն չափ			Չի սահմանվում
Հաշվի փակում			Անվճար
Հաշվի չնվազող մնացորդ			Չի սահմանվում
Քաղվածքների և տեղեկանքների տրամադրում			Համաձայն Բանկի Սակագների և դրույքների

² Տոկոսային եկամուտը ենթակա է եկամտային հարկման՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 10% դրույքաչափով:

³ Հաշիվները բացվում են բացառապես հեռակառավարման համակարգերի միջոցով

Հաշվով հնարավոր գործառնություն ների տեսակներ և սահմանափակու մներ	Հաշվի համալրում	Անկանխիկ՝ փոխանցում միայն Էվոկաբանկ ԲԲԸ-ում գործող իր այլ բանկային հաշիվներից
	Հաշվից ելքագրում	Անկանխիկ՝ փոխանցում միայն դեպի Էվոկաբանկ ԲԲԸ-ում գործող իր այլ բանկային հաշիվներին